Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Է-63 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **« 28» «08» 2025թ. ժամը 10:45**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար համակարգչային մկնիկների և ստեղնաշարերի ձեռքբերման ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Է-63 ծածկագրով գնահատման նիստը հետաձգվել էր, քանի որ «Անտիգա» ՍՊԸ-ին և «Բաղդասարյան 88» ՍՊԸ-ին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1. Տվյալներ՝ շտկված հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին.

«Անտիգա» ՍՊԸ-ի հայտի շտկումը կատարվել է ժամանակին: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Անտիգա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված հայտը. «Անտիգա» ՍՊԸ-ի ներկայացրած սկզբնական հայտում հավելված 1-ը ստորագրված չէր էլեկտրոնային ստորագրմամբ, բացակայում էր Հավելված 1.3 իրական շահառուի վերաբերյալ կայքէջի հղումը՝ էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված, ինչպես նաև տեխնիկական բնութագրում բացակայում էր ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագիրը: Վերը նշված անհամապատասխանությունները «Անտիգա» ՍՊԸ-ի կողմից շտկվել են և գնահատվում են բավարար, իսկ «Բաղդասարյան 88» ՍՊԸ-ն, որի ներկայացրած հայտի հավելված 1-ը ստորագրված չէր էլեկտրոնային ստորագրությամբ և նշված ծածկագիրը՝ ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/65 սխալ էր, բացակայում էր Հավելված 1.3 իրական շահառուի վերաբերյալ կայքէջի հղումը՝ էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված, ինչպես նաև տեխնիկական բնութագրում բացակայում էր ապրանքի ամբողջական բնութագիրը: «Բաղդասարյան 88» ՍՊԸ-ի կողմից հայտի շտկում չի կատարվել:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Է-63 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ «Անտիգա» ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնի մասով, իսկ 4-րդ չափաբաժինը հայտարարվում է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի **42-րդ կետով** և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի **6-րդ հոդվածի 6-րդ կետի բ ենթակետի** պահանջները, ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Է-63 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Բաղդասարյան 88» ՍՊԸ-ն՝ 4-րդ չափաբաժնի

մասով ներկայացրած հայտը գնահատվում է անբավարար և ենթակա է մերժման:

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո «Անտիգա» ՍՊԸ-ին-ին և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Հանձնաժողովի նախագահ՝		**Շ. Հարությունյան**
Հանձնաժողովի անդամներ՝		**Մ. Բաբայան**
		Ե. Հարությունյան
Քարտուղար՝		**Է. Մնացականյան**